ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2015 թ. նոյեմբերի 18 **N 136- Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 415-Ա հրամանով հաստատված՝ 2015 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Արայի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքում 2013 թվականին իրականացված աճուրդում (07.06.2013 թ-ի հ.31Ա որոշում) հաղթող ճանաչված Նաիրի Գասպարյանի հետ 2013 թվականի հունիսի 18-ին կնքված առուվաճառքի պայմանագրով օտարվել է համայնքում սահմանված մեկ հողաբաժնի չափից (1.15 հա) պակաս 1.0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամաս (ծածկագիր՝ 02-018-0107-0044):

Խախտվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 23^1 կետի պահանջներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^9 և 56^1 -րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Արայի գյուղական համայնքի ղեկավար Էդիկ Պետրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ, որն ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ հ/հ 900005243119:

2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Արայի համայնքի ղեկավար Էդիկ Պետրոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արայի համայնքի ղեկավար Էդիկ Պետրոսյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 10 օրվա ընթացքում:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ